ԽՈՀԱՆՈՑԱՅԻՆ ՍՊԱՍՔ ԵՐԵՔ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՃԱՇԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ

Նպատակ

Բարելավել ՀՕՖ-ի երեք բարեգործական ճաշարանների պայմանները և շարունակել արժանապատիվ կերպով հոգալ տարեցների սննդային կարիքները:

Գործողություններ

- Գնել և տեղադրել էլեկտրական սալօջախ Բերդի բարեգործական ճաշարանում,
- Գնել ափսեներ, բաժակներ, սպասք և սփռոցներ Բերդի, Գյումրու և Երևանի բարեգործական ճաշարանների համար:



Ծրագրի նկարագրությունը

Թերսնուցումը զգալիորեն տարածված է Հայաստանի բնակչության խոցելի խավերի, ներառյալ տարեցների, շրջանում: Խնդիրը լուծելու նպատակով ՀՕՖ-ը 1995թ. ի վեր նախաձեռնել է տարեցների սնուցման աջակցության ծրագիրը: Ծրագրից օգտվում են թոշակի տարիքի կանայք և տղամարդիկ, որոնք ունեն հաշմանդամություն, գործազուրկ են կամ չունեն ընտանիքի անդամներ իրենց օգնելու համար:

Շաբաթվա ամեն աշխատանքային օր ծրագրի շրջանակներում գործող բարեգործական ճաշարանները ամեն շահառուի սննդարար ճաշ են մատուցում, որը բաղկացած է ապուրից, հիմնական ճաշատեսակից, հացից, հյութից կամ թեյից: Գյումրիում, Երևանում և Բերդում գտնվող երեք բարեգործական ճաշարանները չունեն բավարար չափով խոհանոցային սպասք՝ արժանապատիվ ճաշ մատուցելու 500 տարեցի, որոնք օգնության կարիք ունեն: Ի լրումն, Բերդի ճաշարանը նոր սալօջախի կարիք ունի, որն անհրաժեշտ է սննդարար ճաշեր պատրաստելու համար: Բարեգործական ճաշարանների համար խոհանոցային նոր պարագաներ և Բերդի ճաշարանի համար նոր էլեկտրական սալօջախ գնելը թույլ կտա ճաշարաններին Հայաստանի տարեց կանանց և տղամարդկանց հարգալից և արժանապատիվ կյանք վարելու հնարավորություն ընձեռել:

Բյուջե

ԻՆՉ	ՔԱՆԱԿ	Մ. ԱՐԺԵՔ ՀՀ ԴՐԱՄ	ԸՆԴԱՄԵՆԸ ՀՀ ԴՐԱՄ	ԸՆԴԱՄԵՆԸ ԱՄՆ ԴՈԼԱՐ
Ափսե	610	705	430,050	$1,075.13
Գդալ և պատառաքաղ	550	113	62,150	$155.38
Բաժակ	610	320	195,200	$488.00
Սփռոց	120	1,600	192,000	$480.00
Էլեկտրական սալօջախ Բերդի ճաշարանի համար	1	730,000	730,000	$1,825.00

Փոխարժեք 1 ԱՄՆ դոլար = 400 ՀՀ դրամ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ **$4,023.51**